



ԳՆԵԼ Ծ. ՎՐԴ. ՃԵՐԵՃԵԱՆ

ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԴԵՊԻ ՀԱՅԱՍՏԱՆ՝ ԵՐԱՆԱՇՆՈՐԸ Ս. Տ. ԳԵՈՐԳ Զ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՕԾՄԱՆ ԵՎ ԹԱՂՄԱՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ

Ս. էջմիածնեն տրված հեռագիր մը 1954 մայիսի 6-ին կհաղորդեր, թե Ամենայն Հայոց Հայրապետ Նորին Ս. Օծովյուն Ս. Տ. Գեորգ Զ. Կաթողիկոս ծանր հիվանդ է: Կիլիկիո Կաթողիկոսական տեղապահ բարձրապատիվ Ս. Նադ արքեպիսկոպոս թոթաբեր լուրը իսկույն հաղորդեց Կիլիկիո թեմերում և հրահանգեց նույն ամսու 9-ին, կիրակի օր, կատարել հանդիսավոր Հայրապետական մաղթանք՝ ի բժշկություն հիվանդ Հայրապետին: Մինչ տրոշյալ օրը բաղմահազար հայեր «Տէր տղորմեա» կերգեին բժշկությանը համար Ամենայն Հայոց Հայրապետին, անվին, Երևանի հիվանդանոցներին մեկուն մեջ, նույն օրը, առավոտյան ժամը 7.40-ին, Այրարատյան նախամեծար Մայր Աթոռ Սայրապոլն Պատրիարք և Կաթողիկոս Ամենայն Հայոց Նորին Ս. Օծովյուն Ս. Տ. Գեորգ Զ. Զտեբջյան հոգին կավանդեր առ Աստված: Մահվան լուրը կգուժեր Գերագույն Հոգևոր Խորհուրդի կողմից տրված հեռագիրը 1954 մայիսի 9-ի: Կիլիկիո Կաթողիկոսարանն ևս ստացավ նույն հեռագիրը, որուն ի պատասխան Կաթողիկոսական տեղապահ բարձրապատիվ Ս. Նադ արքեպիսկոպոս ղրկեց հետևյալ հեռագիրը.

«Նորապես վշտացած եմ վեհափառ Գեորգ Զ. ի մահվան առթիվ: Ընդունեցե՛ք մեր միաբանության և ժողովուրդի խորին ցավակցությունները: Անմիջապես հեռագրեցե՛ք բաղման քվականը»:

Պատասխան հեռագիրը կհաղորդեր, թե օծման և թաղման կարգը պիտի կատարվի ընթացիկ ամսույս 23-ին, կիրակի օր, Ս. էջմիածին:

Կիլիկիո Կաթողիկոսական տեղապահ բարձրապատիվ Ս. Նադ արքեպիսկոպոս իսկույն բացառիկ նիստի հրավիրեց իր մոտ գտնվող Աթոռի եպիսկոպոսները և անոնց հետ խորհրդակցաբար տրոշեց պաշտոնական պատվիրակությանը մը մասնակցիլ մեքանշնոր՝ Հայրապետի օծման և թաղման արարողությանը:

Պատվիրակությունը Բեյրութեն մեկնեցավ 1954 մայիսի 20-ին, Նադեի օդակայանեն, հինգշաբթի օր, կես դիշերին: Հակառակ դիշերվան ուշ ժամուն, բաղմահազար հայեր օդակայան եկած էին ողջերթի: Պատվիրակությունը անձամբ կգլխավորեր Կաթողիկոսական տեղապահ բարձրապատիվ Ս. Նադ արքեպիսկոպոս, որ անձնական մտերմություն հաստատած էր Երանաշնոր՝ Հայրապետին հետ, երբ 1941-ին Հայաստան գացած էր, որպես պատվիրակ Կիլիկիո Կաթողիկոսության, մասնակցելու համար Ամենայն Հայոց Հայրապետի կաթողիկոսական ընտրության: Պատվիրակության մյուս անդամներն էին գերաշնորհ Ս. Դերենիկ եպիսկոպոս Փուլատյան, հոգեշնորհ Ս. Շավարշ վարդապետ Գույումճյան՝ կաթողիկոսական փոխանորդ Դամասկոսի հայոց, հոգեշնորհ Ս. Գնել ծայրագույն վարդապետ Ըբրեճյան, հոգեշնորհ Ս. Շահե վարդապետ Աճեմյան, տեարք Գեորգ Զաթալաչյան, Վահե Վահյան, Սիմոն Սիմոնյան և Պողոս Անթոյան: Կիլիկիո պատվիրակության հետ ճամբա ելավ նաև Երուսաղեմի Հայոց Պատրիարքության պատվիրակությունը, որ կրողկանար երկու վարդապետներ՝ հոգեշնորհ Ս. Հայկազուն վարդապետ Արարահամյան և հոգեշնորհ Ս. Հայրիկ վարդապետ Ասլանյան:

Պատվիրակությունը Բեյրութին ճամբա ելավ հոլանդական K. L. M. քառամեքենա օդանավով և Հոռմ հասավ առավոտյան ժամը 8.15-ին: Երկու ժամ սպասեցինք Հոռմի մեջ: Ապա ճամբա ելանք դեպի Ժընև, սուր հասանք տեղական ժամով ժամը 12-ին: Օդանավային ընկերության պաշտոնյաներին մեկուկուս առաջնորդությամբ, մեզի պատեհությամբ տրվեցավ պատիվ քաղաքին տեսարժան մեկ քանի կողմերը: Հսկա օտորուս մը մեզ առաջնորդեց դեպի Ժընևի ներսի կողմերը: Ժընև աշխարհի ամենին հարուստ քաղաքներն մեկն է, թերևս իր տեսակին մեջ միևնույն, սուր ամենագույնի պատվիրակություններ կուզան ու կերթան: Ժամ մը պատեցանք քաղաքին մեջ: Տեսանք հին ու նոր Ժընևը, անցանք կառավարական շենքերու և Ազգերու Լիգայի պալատին առջևն, ուրկե կըրնայինք դիտել Ֆրանսայի բլրոտ մեկ հողամասը՝ Ժընևի լճի մյուս ափին:

Վերադարձանք օդակայան, ուր առինք կեսօրվան ճաշը և մեզի սեղանակից ունեցանք մեկ քանի Ժընևաբնակ ազնիվ ազգայիններ, որոնց հետ ունեցանք ջերմիկ զրույց ազգային-եկեղեցական հարցերու շուրջ: Անոնք խանդավառությամբ արտահայտվեցան, թե Ժընև երբեքցե աշխարհի վեղարավոր չէր տեսած, և թե շատ ուրախ պիտի ըլլային, եթե հաճախակի ըլլային նման այցելություններ:

K. L. M. օդանավը մեզ հասցուց մինչև Ժընև, ուրկե մեր ճամբան շարունակեցինք զվիցերիական բիմոտոռ օդանավով մը: Ժամը 4-ին ձգեցինք Ժընևը և մեկ ժամին հասանք Յյուրիխ, ուր տեսանք աշխարհի փեղեցկազույն օդակայաններն, մեկը: Յյուրիխ մնացինք երկու ժամ, սուրկե նույն օդանավով և տեղատարափ անձրևով ճամբա ելանք դեպի Վիեննա: Վիեննա հասանք տեղական ժամով 8.30-ին: Ընկերության օտորուսով փոխադրվեցանք քաղաք, որ օդակայանին բավական հեռու կգտնվեր: Առաջնորդվեցանք հյուրանոց մը, ուր մեզի տրվեցավ ամեն դյուրություն գիշերը հանգիստ անցներու: Առաջին գիշերն էր, որ մենք հանգիստ կուտայինք մեր խոնջած մարմիններուն՝ պատրաստելով զանոնք վաղվան հոգնություններուն:

Հաջորդ առավոտ, շաբաթ, 22 մայիսի 1954, ժամը 5.30-ին հյուրանոցն ճամբա ելանք դեպի սովետական օդակայան, որ քաղաքն մոտավորապես 40 կիլոմետր դուրս կգտնվի: Պաշտոնական ձևակերպություններն հոք բարձրացանք սովետական բիմոտոռ օդանավ մը, որ ճամբա ելավ ժամը 6.30-ին և Կիև հասավ տեղական ժամով

ժամը 12.30-ին: Կիև առաջին սովետական քաղաքն էր, ուր կիջնեինք: Անցադրերու ստուգումն հտք հրավիրվեցանք օդակայանի մասնավոր մեկ հարկաբաժինը, ուր խնդրեցինք սովետական օդանավային ընկերությանն, որ կարգադրություն ընե մեզ Կիևն ուղղակի Երևան հասցնելու՝ կարենալ ներկա ըլլալու երանաշնորհ Հայրապետի օժան և թաղման արարողությանց, որոնք պիտի կատարվեին հաջորդ օր, կիրակի, 1954 մայիսի 23-ին, ըստ պաշտոնական հեռագրին: Բարձրաստիճան սպան մեր խնդրանքը հասցուց իր մեծավորին, որ ընդառաջելով մեր պահագին, հեռաձայնային հաղորդակցության մեջ մտավ էջմիածնի հետ, ուրկե պատասխանվեցավ, թե թաղումը հետաձգված է ամսու 27-ին, հինգշաբթի, Համբարձման տոնին: Այլևս հարկ չկար, որ օդանավը իր սովորական ուղին փոխեր:

Կիև մեր մոտեցող կզուգադիպեր պատմական դեպքի մը 300-ամյակին: Ամբողջ սովետական հանրապետությունները մեծ շուքով կնշխին Ուկրաինիո և Ռուսիո միացման 300-ամյակը: Օդակայանը դրոշակադրված էր միութենական հանրապետություններու հակայական դրոշակներով և զինանշաններով: Օդակայանի հսկա շենքին ճակատը կզարդարեին Սովետական Միության մեծ դեկավարներու նկարները, որոնց մեջ կգտնվեր նաև հայազգի փոխ-վարչապետ Անաստաս Միկոյանի նկարը: Հպարտությամբ դիտեցինք նաև ա՛յլ դրոշակներու շարքին հայկական դրոշը, որ կծածաներ հաղթական և վեհ, հայ արիներու թափված արյունովը բուստրացած: Հո՛ւն մանավանդ զգացինք, թե հայը արժեք մը կներկայացնե հակայական տեքստիլան մը բազմամիլիոն ազգաբնակչության մեջ, հակառակ քանակով իր նվազության:

Այս խանդավառ մտածումով առաջնորդվեցանք օդակայանի ճաշարանը, ուր մեզի հրամցվեցավ ճոխ սեղան մը: Ապա տեղական ժամով ժամը 3-ին բարձրացանք օդանավ՝ թռչելու համար դեպի Մոսկվա: Հաղիվ օդանավ բարձրացած էինք, պատվիրակության պետին՝ բարձրաշնորհ Տ. Խաղ արքայիսկուսին ներկայացվեցավ Մոսկվային դեռ նոր ժամանած պատվիրակություն մը, որ Կրոնից նախարարության անունով, պաշտոն տնեք բարի պալուստ մաղթելու Սիրուլի ծանոթագրումն հոք, օդանավը թռչը առավ դեպի Մոսկվա, ուր հասանք տեղական ժամով ժամը 5.40-ին:

Օդակայան դիմավորելու եկած էին Սովետական Միության Կրոնական պաշտամունքներու խորհուրդի նախագահ Պոլյանսկի,

նույն խորհուրդի ավագ աշխատակից Սմիտով, արժանապատիվ Տ. Խաչատուր ավագ քահանա Տեր-Հարությունյան և բարեշնորհ Անդրանիկ ավագ սարկավագ Գալստյան: Դիմավորողներու խումբին խառնված էր նաև Հարավային Ամերիկայի կաթողիկոսական պատվիրակ գերաշնորհ Տ. Սիրոն և պիսկոպոս Մանուկյան, որ նոր ժամանած էր Մոսկվա: Աստուծոյ խնայանք, թե մեզմէ քիչ առաջ ժամանած են Հյուսիսային Ամերիկայի առաջնորդական տեղապահ գերաշնորհ Տ. Մամբրե արքեպիսկոպոս Գալֆայան և նախկին առաջնորդ գերաշնորհ Տ. Տիրան արքեպիսկոպոս Ներսիսյան, որոնք մեկնած են Մոսկվայի «Նացիոնալն» մեծ պանթոնը, իսկ Ռուսաւոր հայոց պատվիրակները՝ առաջնորդ գերաշնորհ Տ. Վաղգեն եպիսկոպոս Պալճյան և Ազգային խորհուրդի ատենապետ տիար դոկտ. Հակոբ Բամբուկչյան և տիար Վ. Դանիելյան եկած և անցած են դեպի Երևան, իրենց հետ ունենալով փարիզահայ գրող Տիար Լեոն Մեսրոպը:

Պաշտոնական ձևակերպություններն ետք առաջնորդվեցանք Մոսկվա, որ օդակայանէն մոտավորապէս 40 կիրամետր հեռու կգտնուվեր, և իջևանեցանք «Նացիոնալն» հյուրանոցը:

Կես դիշերեն ետք, ժամը 1.30-ին, ճամբարինկանք դեպի օդակայան, ուր ժամը ճիշտ 3-ին, կիրակի առավոտ, 1954 մայիսի 23-ին օդանավ առինք և թռանք դեպի Երևան: Օդանավը, որ մեզ կտաներ դեպի Երևան, կկոչվեր «Երևան»: Օդանավորդները հայ և ճամբորդներն էա հայ էին, որոնք կթռչէին դեպի հայոց աշխարհը, Հայաստան: «Երևան» օդանավը մեզ հասցուց խարկով տեղական ժամով ժամը 6-ին: Անձրեկ կաթիլներուն տակ օդանավին վար իջանք այն հողին վրա, ուր ամենեն ահեղ ճակատամարտները մղվեցան Համաշխարհային Երկրորդ պատերազմին: Արդեն վերանորոգված է խարկով, ուր մնացինք 30 վայրկյան: Ռուստով հասանք տեղական ժամով 8.20-ին: Ժամը 9-ին Ռուստովէն ճամբար նշանք դեպի Սուխոմի, ուր հասանք Երևանյան ժամով 12.45-ին, անցնելով Կովկասյան լեռներու վրային, Սև ծովի եզերքով: Ծամբան տեսանք Սոչի, որ Սովետական Միութեան մեծագույն և գեղեցկագույն բուժավայրերն էին է, տարածված Սև ծովի ափին, և ուր տվոր էր գալ և հանգչիլ նաև Երանաշնորհ Հայրապետը Գեորգ Զ.:

Սուխոմի մեջ բավական հայեր կան: Օդակայանին մեջ ժամովացա երկու հայերու

հետ, որոնք լացին, ևրբ լսեցին Վահագն Հայրապետի մահը:

Սուխոմիէն դեպի Երևան ճամբար ելանք Երևանյան ժամով 1.15-ին, Սև ծովը ձգած մեր աշին: Օդանավը միշտ կբարձրանա, որովհետև պիտի անցնի բարձրաբերձ կատարներու վրային: 2.800 մետրի վրային դիտեցինք Թիֆլիս քաղաքը, որ փռված է ընդարձակ տարածութեան մը վրա, Քուր գետի երկու եզերքուն: 3.000 մետր բարձրութեան վրային տեսանք Քուր գետը մեր աշին, որ կմիանա Խրամի հետ: Անոնց միացման կետին վրա նետված է կամուրջ մը, որ կմիացնէ Վրաստանը Սովետական Հայաստանի: Հայրենի սահմանն ենք մտանք 3.000 մետր բարձրութեան վրա, Երևանյան ժամով ժամը 2.45-ին: Սահմանադրույն անցանք հոսնկայս երգելով հայրենի հիմներ: Ահա մեր աշին քառազագաթ Արագածը, իսկ ձախին՝ Գեղամա լեռները. քիչ մի անդին Սևանք, աշխարհի բարձրագույն լիճներն մին, որոնք մեզ կերևա կողմին՝ իր զուգ կաթողիկներով և Գրողներու հանգստան տունով: Դիմացդ է հայու փառքին ու դժբախտութեան, ցնծութեան և տրամութեան լուսվիւն... ԱՐԱՒԱՒԱՒԱՒ: Բնութեանը կպատման անթրոպոլոգի ցնցումներ, թերևս ի տես հայուն երրակ նվիրականութեանց՝ Սևանա լիճին, քառազագաթ Արագածին և Մեծ ու Փոքր Մասիսներուն: Հազիվ կհասնինք Մաղկաձոր ու կդիտենք հանդիպակաց Արարատը, երբ մեր ոտքերուն տակ կտեսնենք քաղաք մը, որ Երևանն իսկ է: Առաջին հայ տունին վրային անցանք Երևանյան ժամով ժամը 3.20-ին և քանի մը վայրկյանն իջանք Երևանի օդակայանը, ուր մեզ դիմավորելու եկած էին Ս. Էջմիածնի միաբանութեան կողմէ Մայր Տաճարի լուսարարապետ գերաշնորհ Տ. Սահակ եպիսկոպոս Տեր-Հովհաննիսյան, հոգեշնորհ Տ. Գարեգին ծայրագույն վարդապետ Հակոբյան, հոգեշնորհ Տ. Գեորգ ծայրագույն վարդապետ Վաթյան, պրոֆ. Աշոտ Արբահամյան, Ծեմարանի տեսուչ և Գերագույն Հոգևոր Խորհուրդի անդամ պարոն Մինաս Մինասյան և քանի մը օտարկավազներ, Հայկական ՍՍՌ Մինիստրներու Սովետին կից Հայ Եկեղեցիի գործերու խորհուրդի նախագահ Հրաչյա Գրիգորյան, Արտասահմանի հետ կուլտուրական կապի Հայկական ընկերութեան կողմէ տնօրենի տեղակալ պարոն Լ. Մանասերյան, «Սովետական Հայաստան» ամսագրի պատասխանատու խմբագիր ոլորոն Պատրիկ Սելյան (Հյուսիսային Ամերիկայէն ներգաղթած), պարոնայք Բարդույան, Գասպարյան և Դավիթ Մովսիսյան:

Ս. Էջմիածնի անոմալ բարի գաղութացի զեմալիտը՝ Ս. Սահակ եպիսկոպոս Տեր-Հովհաննիսյան։ Պատվիրակության կողմից ցավակցական արտահայտություն ունեցավ Կիլիկիո Կաթողիկոսական տեղապահ Բարձրապետի՝ Ս. Նադ արքեպիսկոպոս։

Պատվիրակությունը առաջնորդվեցավ Երեւանի «Խնտուրիստ» հյուրանոցը, որ կգտնվի Արտվանի փողոցի վրա։ Պատվիրակության ժամանման լուրը ռադիոյով հաղորդված ըլլալով, Երեւանի հասարակությունը փութացած էր օդակայան և «Խնտուրիստ» հյուրանոց։ Մեզի տրվեցավ պաշտոնական ճաշ։ Սեղանի վրա արտասանվեցան ճառեր, նվիրված երանաշնորհ Հայրապետին, Ս. Էջմիածնի և Կիլիկիո Կաթողիկոսությանց, Ս. Երուսաղեմի և Կոստանդնուպոլսո Պատրիարքությանց, Սովետական Հայաստանի և ամեր կառավարության։

Ճաշին նոք պատվիրակությունը պաշտոնական զեմալիտ մեկնեցավ Ս. Էջմիածին, որ դիմավորվեցավ Գերագույն Հոգևոր խորհուրդի նախագահող անդամ Բարձրապետի՝ Ս. Վահան արքեպիսկոպոս Կոստանյանի փողով, շրջապատված Ս. Էջմիածնի մյուս անդամներով — գերաշնորհ Ս. Սուրեն եպիսկոպոս Թորոսյան, հոգեշնորհ Ս. Վարդան ծայրագույն վարդապետ Տեր-Սահակյան, հոգեշնորհ Ս. Նահապետ վարդապետ Մուրադյան, հոգեշնորհ Ս. Եղիշ վարդապետ Ազնավորյան, հոգեշնորհ Կոմիտաս արքեպիսկոպոս Սեր-Ստեփանյան և քահանա հայրեր ու սարկավագներ։

Պաշտոնական բարի գաղութի ու ցավակցական արտահայտություններն ետք պատվիրակությունը այցելեց Վեհի մարմինին, որ կհանգչեր Մաղկյա դահլիճին մեջ զետեղված փառաշուք դագաղի մը մեջ։ Պատվիրակությունը փոխերը վերադարձավ Երեւան, «Խնտուրիստ» հյուրանոց, որ մնաց միմեջ իր մեկնումի օրը։



Պատվիրակությունը, որ երկար ճանապարհորդությունն հոգնած էր, հաջորդ օրը ամբողջ (24 մայիսի 1954, երկուշաբթի) հանգիստ ըրավ։ Խնտուրիստ հյուրանոցը վերածված էր ուխտատեղիի մը, տը ներգաղթող հայեր կուգային տեսակցելու պատվիրակության անդամներուն հետ, անոնցմ աստանալու համար խաբրիկներ արտասահմանի իրենց հարազատներեն։



Պատվիրակությունը մայիսի 25-ին (1954), երեքշաբթի օր այցելեց Երեւան քաղաքի զանազան վայրերը՝ առաջնորդությամբ իրիտասարդ ճարտարապետ Վա-

րազդատ Հարությունյանի և ընկերակցությամբ Երեւան քաղաքի զինավոր ճարտարապետ Գրիգոր Աղաբաբյանի և ԱՕԿՍ-ի (Արտասահմանի հետ կոպտութեան կապի Հայկական ընկերություն) պաշտոնյաներուն։ Առաջին շենքը, որ այցելեցինք, ճարտարապետներու տունն էր, որ հայկական ճարտարապետության գլուխ գործոց մըն էր։ Մանրամասնք ճարտարապետներու տան տնօրենին հետ, որ կկոչվի Լ. Ներսիսյան։ Զեմալիտ ըրավ ճարտարապետ Վարդգես Հարությունյան։ Երեւան քաղաքը պլանավորված է հանգուցյալ ակադեմիկոս Թամանյանի կողմից։ Պլանի իրագործումը կշարունակվի երիտասարդ ճարտարապետներու ձեռքով։ Արագորեն կբարձրանան, ընդհանրապես շուրջ հարկի վրա, հայկական ոճով մեծ ու պզտիկ, սյունազարդ ու կամարակապ սիրուն շենքեր, քառասուն մետր լայնքով պողոտաներու երկայնքին, որոնք եղբրված են կանաչազարդ ծառերով և էլեկտրական սյուններով, որոնց վրա զետեղված են շուրջ-հինգ գլուխներով էլեկտրական լամպեր, որոնք գիշերները կլուսավորեն Երեւանը։ Այցելեցինք Ստալինի մոնումենտ-քանդակը, անցնելով Դոկաս Դոկասյանի ագիտով։ Հսկայական բարձրությամբ այս հիշատակարանը կիշխե Երեւանի երեք շորորդին և պատրաստված է մեկի ալիքի ճարտարապետներու և ճարտարապետներու ձեռքով։ Նորությամբ և վարդապետներու պեսպիստությամբ քանդակված են կոթողական այս հիշատակարանի մանավանդ քրոնիկ դուռն ու կամարները, որոնք սքանչալի կառվեն այցելուներու Դոկասյանի զոսադի միջով իջանք քաղաք և այցելեցինք Հաֆիզ Կարամիլի համերգային մեծ սահլիճը, որ կգտնվի Օպերայի հսկայական և հայկական ոճով սքանչելի շենքին վրա։ Մեր Օպերայի շենքը իր նմանը շունի ամբողջ աշխարհի մեջ։ Հսկայական երեք շահեր կլուսավորեն մեծ դահլիճը, որ կհանգչի մեծ և ամենին արդիական կահ-կարասիքով։ Հոն հանդիպեցանք աշխարհահռչակ երգիչ և դերասան Պավել Լիսիցյանի, որ կպատրաստվի մեկնել Թիֆլիս՝ տալու համար համերգային երեկո։ Անցանք Երեւանի փակ շուկան, որուն նմանը չունենք նույնիսկ Մոսկվայի մեջ։ Հայկական ոճով հսկա դուռն մը ներս մտնելով այցելեցինք Փակ շուկայի զանազան մասերը, որ հայ վաճառորդներ կծախեն իրենց արտադրությունները պետական սակրով։ Մաքրությունը տիրական էր ամեն կողմ և գինները՝ մատչելի։ Փակ շուկային ուղղվեցանք դեպի Հաղթանակի կամուրջը, որ նետված է Զանգուի վրայ։

Քիչ մը անդին, Զանգվի ձախ ափին տեսանք Մանկական երկաթուղին իր կայարանով և զբոսավայրով, ուր մանուկներ խմբովին կուզան զբոսնելու: Վայրաշաժ քողները, վայրանապետն ու ճամբորդները բոլորն ալ մանուկներ են, որոնք այժմեն կսորվին Հայրենիքին ծառայելու կերպերը: Մանկական երկաթուղին անդին կգտնվի Միջին Արևելքի մեծագույն կամուրջը, որ կմիացնի Երևանը Շահումյանի: Ծարտարապետն է Գրիգոր Աղաբաբյան: Կամուրջը յոթանասուն մետր բարձրության վրա նետված է Զանգվի ձորի վրա: Զանգուն ձգելով մեր աչին՝ հառաջացանք դեպի Ստադիոն (մարզարան), անցնելով Երևանի հին թաղամասի մը մեջքին, որ կմնա որպես նմուշ հին Երևանին: Հազարավոր երկսեռ մարդիկներ լողարաններու շուրջ շարված էին՝ լողանք առնելու համար: Դաշտը կարելի չէ բաղդատել Լիբանանի կառավարական դաշտին հետ: Դաշտին երեք շորտորդը կիսաբոլորակ եղբրված է քարաշեն աթոռներով, ամփիթատրոնի նստարաններուն ձևով: Ապա անցանք Համալսարանի նոր շենքին մոտով, որ փռված է ընդարձակ տարածության մը վրա: Համալսարանի հին շենքը իր մեջ կհաշվի 18 ֆակուլտետ և բազմաթիվ պոլիտեխնիկ հաստատություններ: Նոր շենքը պիտի ընձեռն ավելի լայն հնարավորություններ՝ ամենեն արդիական կառույցով և սարքավորումով: Կեսօրը անց վերադարձանք հյուրանոց՝ մեծապես խանդավառ մեր Հայրենիքին հակառակ վերելքով:

Նույն օրը երկկույան ժամը 4-ին, պատվիրակությունը մեկնեցավ դեպի Ս. Էջմիածին, երանաշնորհ Հայրապետի մարմինը Մաղկյա դահլիճեն Մայր Տաճարը փոխադրելու համար: Քառասունն ավելի քահանաներ և քանվից վեղարավոր վարդապետներ և պատվավորներ ներկա եղան հանդիսավոր այս թափոնին: Մարմինը փոխադրվեցով ծիսական-պանոնական շարականներով, աղոթքներով, փրբի և ավետարաններու ընթերցումներով: Դադաղը ուսամբարձ կտանեին վեղարավոր մկիդեցականներ: Հավատացյալներու ստվարաթիվ բաղմունքներ մը փութացած էր Ս. Էջմիածին, համբուրելու համար Աջը երանաշնորհ Հայրապետին: Հայ ոստիկաններու շոկատ մը կպահպաներ կարգը՝ շղթա կազմած վեհարանեն մինչև Մայր Տաճար: Բաղմունքներ կուլար՝ զգալով թի առհավիտ կուրմեցուցած է մեծ, հայրենանվիր և գործոնյա Հովվապետ մը, մինչ Էջմիածնի դանդաղները աղեկապետ և բնդհատ-բնդհատ կհեղին՝ բաժնեկից ըլլա-

լով սղավոր բաղմունքյան անհուն տրամունքյան:

Եկեղեցական դասը երանաշնորհ Հայրապետի մարմինը Մայր Տաճար փոխադրելու հոգի մատուցելու երեկոյան ժամերգություն և կատարեց հանդիսավոր հոգեհանգիստ՝ նախագահությամբ Կիլիկիո Կաթողիկոսական տեղապահ բարձրապատիվ Տ. Խաղապետ պատվոս Աջապահյանի: Սովորական են ավելի տխուր կհնչեր «Ահեղ խորհուրդ քահանային» երգը, որու ընթացքին կուլար նաև «Վարդապետ»՝ Ավետիք Իսահակյան, երանաշնորհ Հայրապետի մոտերումն ու գործակիցը: Այս տխուր արարողության ներկա էր նաև Գերագույն Հոգևոր Խորհուրդի անդամ տիար Ս. Ի. Կամարական, որուն սրտանվեր եկեղեցասիրությունն ու ծառայությունը արժանի են ամեն զնահատանի: Պատվիրակությունը ուշ ատեն վերադարձավ Երևան, հյուրանոց, պաշտոնական նույն զնացքով:



Պատվիրակությունը հաջորդ օր, 26 մայիսի 1954, չորեքշաբթի, այցելեց Երևանի էկկտրամիքենաշինական ու ժամացույցի գործարանները: Առաջինը կգտնվի Կառույցի 3-րդ թաղամասին մեջ, իսկ երկրորդը՝ Նոր-Արաբկիր: Էկկտրամիքենաշինական գործարանը պատիվ կբերե Հայաստանի Կառավարության՝ իր մեծության և անմրցելի արտադրություններուն պատճառով: Տնօրենն է Գուրգեն Զուլպյան, իսկ գլխավոր ճարտարագետը՝ Աղասի Միրզոյան: Կարտադրի էկկտրական ամեն տեսակի գործիքներ, ինչպես նաև գեներատորներ, տրանսֆորմատորներ, տուրբիններ և այլ կարգի մեծ ու պզտիկ մեքենաներ, որոնք կապառին համայն Սովետական Միության հանրապետություններուն մեջ: Հազարավոր գործավորներ կաշխատին աճող մեջ, որոնցմե շատեր կգերակատարեն իրենց տարեկան աշխատանքը:

Ժամացույցի գործարանին տնօրենն է Արշակ Հարությունյան, իսկ գլխավոր ճարտարագետը՝ Էլկանա Հարությունյան: Գործարանը քանի մը տարիներու կյանք ունի և արդեն Կարտադրի տարեկան մեկ միլիոն սեղանի ժամացույցներու Առաջադրված է շուտով բանալ ժամացույցի գործարան մը, որ արտադրի ձեռքի ժամացույցներ, որոնք կարենան մրցել զվիցերիական ժամացույցներու հետ:

Զուլպ գործարաններուն մեջ ևս կաշխատին ներգաղթող հայեր, որոնցմե շատերուն

անունները կարգացինք պատվո տախտակներում վրա:

Մայիսի 27-ին, հինգշաբթի օր, Համբարձման տոնին, տեղի ունեցավ երանաշնորհ Հայրապետի օծումն ու թաղումը, Ս. Էջմիածնի Մայր Տաճարին մեջ: Ներկա էին պետական և կրոնական բարձրաստիճան ներկայացուցիչներ: Հասարակությունը հավաստիացվեցավ, թե հարյուր հազարեն պակաս չէր: (Օծման և թաղման նկարագրությունը տրված է «Հասկ»-ի 5—6 համարում, պարոն Սիմոն Սիմոնյանի հոդվածում:— Խմբ. «Էջմիածին» ամսագրի):

1954 մայիսի 28-ին, ուրբաթ օր, պատվիրակությունը ուղևորվեցավ դեպի Սևան, քանաքեռի ճամբայով: Ճամբուն վրա հանդիպեցավ Արզնիի բուժավայրը, որուն դիմաց է Սուրեն Անդրեասյան և բժշկուհին՝ Գոհար Բադալյան: Բուժավայրին մեջ տեսանք հայրենակիցներ և օտարներ, որոնք նկատ էին արձակուրդի իրենց օրերը հոն անցնելու, կազդուրվելու և վամ բուժվելու համար: Անոնք հոգածու խնամք կվայելեն տեղվոյն բժշկական խումբին և ստորադաս պաշտոնյաներին: Բուժավայրը օժտված է բժշկական ամեն տեսակ սարքավորումներով. փակ հրաշք կկատարե բուժավայրի հանքային ջուրը: Պատվիրակությունը այցելեց բոլոր հարկաբաժինները և իր սքանչացումը հայտնեց բժշկական կադմին: Բուժավայրը շրջապատված է կանաչադարձ պարտեզ-պուրակով մը, որուն մեջ բուժավայրի բնակիչները ման կուզան կամ կհանգստանան: Բուժավայրի ստորոտով կհոսի Հրազդան գետը:

Հաջորդ և գլխավոր մեր այցելելիք վայրն էր Սևանա լիճը, Սևանա կղզին և Սևանգէսը (Սևանի ջրաէլեկտրակայանը): Սևանգէսի տնօրենն է Թաթուլ Մարտիրոսյան, որ առաջնորդեց մեզ և տվավ անհրաժեշտ բացատրություններ: Զրաէլեկտրակայանը կաշխատի Սևանի ջուրով, որ 125 մետր բարձրությունից նետվելով կղարձնի վիթխարի մեծությամբ տուրբիններ, և ապա անցնելով անջրդի դաշտերու մեջեն՝ կոտոգե ընդարձակ տարածությամբ հողեր: Սևանգէսը Հայաստանի մեծագույն փառքերեն մեկն է:

Կանցնինք Սևանա կղզին, որ այլևս փրածված է թերակղզի: Սևանգէսի սպառած ջուրը երևան բերած է պարանոցը, որուն վրայն մեզ փոխադրող ինքնաշարժները շատ հնշտությամբ անցան: Այժմ մենք կղզիին բնակիչներեն ենք և կբարձրանանք բլուրը, որում գագաթին վրա կառուցված են

հայկական զույգ կաթողիկեններ: Մոտակա դյուղի բնակիչներու հոգեկան պահանջներուն գոհացում տալու համար՝ կատարեցինք կարճ ժամերգություն մը: Օղբ ամպոտ էր և անձրևի վախ կար. այդ պատճառով չկարողանաք այցելել Գրողներու հանգստյան տունը, որ կառուցված էր բլուրին ստորոտը, Սիւնա ափին: Պատվիրակությունը ճաշ տըրվեցավ Սևանի հյուրանոցին մեջ, ուր ներկա էին նաև «Մատուրիստ» հյուրանոցի վարիչ պարոն Սաթյան, կրոնական գործերու խորհուրդի նախագահներ՝ պարոններ Պուլյան-սկի և Հրաչյա Գրիգորյան և ա՛յլ պետական անձնավորություններ: Սեղանի գլխավոր զարդն էր իշխանաձուկը: Բաժակներ պարպրվեցան Ս. Էջմիածնի և Մայր Հայրենիքի բարգավաճման համար: Ուշ երեկոյին պատվիրակությունը հասավ Երևան:

Մայիսի 29-ին (1954), շաբաթ օր, երեկոյան ժամը 8.30-ին պատվիրակությունը ներկա եղավ Երգի և պարի անսամբլի ելույթին, որ տեղի ունեցավ Հայֆիլհարմոնիայի համերգային մեծ դահլիճին մեջ, որուն շինությունը վերջացած է 1953-ին, և որ ունի 1.400 աթոռ: Սրահը ծայրեփայլ լեցուն էր երաժշտատեր հասարակությամբ:

Մայիսի 30-ին (1954), կիրակի երեկոն հատկացված էր աստուծոյ վարպետ տաղանդավոր Սուրեն Քոչարյանին, որ ճանչցված է որպես Հայաստանի «Լաւաճ մարդ»ը, որովհետև 31 փրքեր ամբողջությամբ կրնա գոց արտասանել՝ առանց հուշարարի: Մեկուկիթը սկսավ ժամը 8.40-ին և Սուրեն Քոչար երկուք ու կին ժամվան մեջ արտասանեց խաչատուր Աբովյանի «Վերջ Հայաստանին», Սուրեն Քոչար արժանի է խորագույն հիացմունքի:

1954 մայիսի 31-ին, երկուշաբթի օր, արշավանք կազմակերպված էր դեպի Կարմիր բլուր, առաջնորդությամբ Զոհրապ Գասպյանի, որ ներգաղթած է Բուլղարիայեն: Կարմիր բլուր վերջերս ենթարկվեցավ սեղաններու, ուր երևան բերվեցան ուրարտական հնություններ, անվնաս կոթող մը և պարիսպներու մնացորդներ, որոնք իրենց հնագիտական առարկաներով և արժանագրություններով նոր լույս կսփռեն հայոց պատմության վրա: Պեղումներուն վարիչն է ուսնազգի Պիետրովսկի, որ միաժամանակ Հայաստանի Գիտություններու ակադեմիայի թղթակից-անդամ է: Կարմիր բլուր կգտնվի Հրազդան գետի ձախ ափին:

Նույն օրը, կեսօրե ետք, ժամը 1.30-ին, պատվիրակությունը առաջնորդվեցավ դեպի Պետական մատենադարան (Ջեռագրատուն), որում վարել է Շուշանիկ Նազարյան, և որ կոտակվի երկրորդ հարկի վրա, ուր կպահվին 11.000 մեր ձեռագրերը, մինչև առաստաղը հասնող երկաթե դարաններու մեջ, ամենզմե և անաղարտ: Մասնավոր ապակեդարաններու մեջ ցուցադրված էին ավետարաններ, ճաշոցներ, հայամավորքներ և ա՛յլ ձեռագրեր, ըստ նյութի դասավորված: Կան առանձին աշխատանքներ գիտնականներու և համալսարանական ուսանողներու համար, պատշաճ կահավորումով:

Մատենադարանի համար շինված է նոր և չճանաչ շենք մը, որ լրանալու մոտ է և ուր ի մոտոս պիտի փոխադրվին բոլոր ձեռագիրները:

Նույն օր, կեսօրե ետք ժամը 4-ին, պատվիրակությունը այցելություն տվավ Հայկական ՍՍԻ Գիտություններու ակադեմիան, որում անունով դիմավորվեցավ փոխնախագահ Մ. Ներսիսյանի կողմից: Նախագահը՝ Վիկտոր Համբարձումյան, կգտնվիր Մոսկվա: Ներկա էին Հայկական Գիտություններու ակադեմիայի փակական և թղթակից անդամներին շատեր: Փախալարձ ծանոթացումն ետք ղեկույց փոխ-նախագահը՝ պատմականը ընկելով Հայկական ակադեմիայի հաստատման և զարգացման: Ակադեմիան ունի հինգ բաժանմունքներ Լ ամեն մեկ բաժանում մեկն ավելի ինստիտուտներ, իրենց տնօրեններով: Ակադեմիան այժմ ունի 26 իսկական և 18 թղթակից-անդամներ: Ունի իրեն, հատուկ տպարան, որ անցավ տարի տպած է 150 մեծ ու փոքր գիրքեր: Պետական թանգարանը, բացի Պատկերասրահեն, կհամարվի Ակադեմիայի հիմնարկ: Իսկ Մատենադարանը՝ առանձին հիմնարկ, ուր սակայն ակադեմիկոսներ կերթան աշխատանքներ կատարելու:

Մեծ հաճույք մը եղավ պատվիրակության անդամներուն համար ծանոթանալ Հայկական Գիտություններու ակադեմիայի անդամներուն հետ, որոնցմե ամենք կույթներ ունեցան իրենց ճշտագետու մասին:

Հայկական Գիտություններու ակադեմիան իրականացումն է դարերու մեր երազին և ամեն հայ իրավունք ունի հպարտանալու անով, որովհետև անոր մաս կկազմեն համաշխարհային չափանիշով արժեքավոր ակադեմիկոսներ:



1954 հունիսի 1-ին, երեքշաբթի օր, ժամը 11.20-ին, պատվիրակությունը մեկնեցավ դեպի Դվինի ավերակները՝ առաջնորդու-

թյամբ Կարո Ղաֆադարյանի, որ ղեկավարն է Դվինի պեղումներուն, և որ առանձին գիրք հրատարակած է պեղումներու արդյունքի մասին: Գիրքը արդեն սպառած է: Պատվիրակությունը ուշի-ուշով հետևեցավ մեծ դիտնական-պատմաբանի մոտ երկու ժամ տեղ բացատրություններուն, Դվինի ավերակներու մասին: Պահ մը մենք զմեզ զգացինք ներկայությունը հայրենասեր և հոնորո Հովհաննես մեծ հայրապետին, որ համերաշխություն կքարոզեր 5-րդ դարու տվառապահ և ուրացող նախարարներու միջև՝ երբ կպատերազմե Դվինի կաթողիկոսանիստ Մայր Տաճարի ավերակներուն մեջ: Հավատացյալ ժողովուրդը այժմ խաչքարի մը առջև իր մոմը կվառե ու խոնկը կծխե հաղորդվելու համար իր նախնիքներուն մաքուր հավատքով և սիրով:

Դվինի ավերակներեն բաժնվելով ուղղվեցանք դեպի Աթարբեկյան կոլտնտեսությունը, որ կգտնվի Արտաշատի շրջանի Նորաշեն գյուղին մեջ, Դվինեն ոչ շատ հեռու: Գյուղը նախապես կոչված է Քյուրդքենդ: Նորաշեն կոչված է 1924-ին, Վանեն գաղթական հայերու կողմից: Կոլտնտեսությունը կազմված է 1928-ին՝ 18 կոլտնտեսականներու միացումով: Այժմ գյուղը իր մեջ կհաշվե 370 տուն, որոնց բոլորն ալ մաս կկադմեն կոլտնտեսության: Արտի և դուրանի տեղը բռնած է տրակտորը: Կոլտնտեսության հիմնական զբաղումը այգեգործությունն է, որում տրամադրված է 252 հեկտար հող: Կան ուրիշ տնտեսություններ ևս: Կոլտնտեսությունը այժմ բանկի մեջ ունի 3.900.000 ռուբլի, որ գոյացած է 10—15 տարիներու ընթացքին:

Կոլտնտեսությունը կհաշվե 600 աշխատողներ, որոնցմե 450-ը միայն կաշխատի օրական: Իւրաքանչիւր կոլտնտեսական կստանա օրական 13 ռուբլի և 23 կոպեկ, 700 գրամ գինի, 60 գրամ վոտկա (օղի), մեկ ու կես կիլո ցորեն և 300 գրամ կաթ: Ամեն մեկ ընտանիք տնամեծ ունի 1.200—1.800 քառակուսի մետր հող, մեկ կով, տասը մայր տղիսար, մեկ գոմեշ, մեկ ձի և էշ մը: Ընտանիքը ինք կամշակե և ի՛նք կուտեն: Կոլտնտեսության նախագահն է Օգոսեն Նշանի Միլնասյան, որ մեզի տվավ վերահիշյալ տեղեկությունները՝ իր գրասենյակին մեջ: Կոլտնտեսությունը ունի իր դպրոցն ու նորակերտ ակումբը, ուր առաջնորդվեցանք նախագահի ընկերակցությամբ: Դպրոցը կոչված է Ավետիք Իսահակյանի անվամբ: Տնօրենն է Վաղարշ Գրիգորյան: Դպրոցը ունի լաբորատորիայի ճոխ բաժին՝ գիտական փորձերու համար: Այցելեցինք տեղացի և Պարսկաստանին

ներգաղթած կոլտնտեսականներու տոմսերը, ուր հավասարապես մեզի հրամցվեցաւ գինի և խորտիկ։ Տեղացիի և ներգաղթողի միջև տարբերություն փոխություն չունի։

Կոլտնտեսության նախագահի տան մեջ տրվեցաւ ճոխ սեղան, որուն շուրջ բոլորվեցանք մոտ 70 հոգի, որոնց առջև դրված ուտեստեղենի առատությունը անտեսանելի կդարձնէր տեղանի ծածկոցը։ Սեղանի վրա ուրախությունը իր գագաթնակետին հասավ, երբ կոլտնտեսության դհուկ-դուռնան և դուկ-դուկը սկսան նվազել փոխնիփոխ Կոմիտասն ու ժողովրդական գեղջուկ երգերն կատարեն։ Հագիվ կարելի եղավ համագել նախագահը, որ մենք պետք է որ մեկնեինք, մինչ ան՝ Հայաստանի գյուղական սովորության համաձայն, կուզեր մեզ նվազագույնը... երեք օր հյուր պահել իրեն մոտ։

Նույն օրը, երեկոյան ժամը 7.30-ին, պատվիրակությունը ներկա եղավ Արշակ Բ օպերային Պետական օպերայի շենքին մեջ։ Նրաժշտություն՝ Չուխաջյանի, և հրաշալի դերեր։

Հունիսի 2-ին (1954), չորեքշաբթի օր, կեսօրն առաջ ժամը 11—2.30-ին, հանդիպում մը կարգադրված էր Հայաստանի գրողներուն հետ։ Հանդիպումը Գրողներու միության նախագահին՝ Ալեքսի Իսահակյանի փափագին վրա տեղի ունեցավ իր նորակառույց տանը մեջ, ուր ամեն ինչ ընտիր ճաշակով հարգարված էր։ Ներկա էին Վարպետը, Դերենիկ Դեմիրճյան, Ստեփան Ջորյան, Արագի, Սիրաս, Գուրգեն Բորյան, Գեորգ Էմին, Սիլվա Կապուտիկյան, Հրաչյա Քոչար, Վահան Գրիգորյան, Շաքե Վարսյան, Հակոբ Արամյան, ԱՕԿՍ-ի պաշտոնյաներն տնօրինի տեղակալ Լ. Մանասերյան, Պատրիկ Սեւյան, Մանվել Բաբլոյան և Դավիթ Մովսիսյան։ Հրաչյա Քոչարը նոր վերադարձած էր Մոսկվայից, ուր կպատրաստվեր մեկնել նորեն՝ զբաղելու համար իր «Մեծ տան զավակները» վեպին ուսերենի թարգմանության գործով։

Փոխադարձ ծանոթացումն ետք՝ Հայաստանի գրողներն անուրբ ունեցան Վարպետը, Դերենիկ Դեմիրճյան, Սիլվա Կապուտիկյան, Գեորգ Էմին և Գուրգեն Բորյան, որ հայ Գրողներու միության քարտուղարն է, իսկ պատվիրակության անդամներն՝ Տիրան արքեպիսկոպոս, Վազգեն եպիսկոպոս, Շահն վարդապետ և Վահն Վահյան։

Հոն իմացանք, թե Դերենիկ Դեմիրճյան լրացուցած է Մեսրոպ Մաշտոցի կյանքը պատկերող պատմական իր նոր վեպը և

այժմ կզբաղի անոր վերամշակումի գործով։

Շատ խանդավառ մթնոլորտի մը մեջ բաժնվեցանք իրարմե՝ մաղթելով, որ նման հանդիպումներ ավելի հաճախադեպ ըլլան և ավելի լաթն շրջանակի մը մեջ։

Հունիսի 3-ին (1954), հինգշաբթի օր, յոթնօր թաղման երանաշնորհ Հայրապետին։ Պատարագ Ս. Էջմիածնի Մայր Տաճարին մեջ, Ավագ տեղանի վրա։ Պատարագին էր Ռումանահայոց առաջնորդ գերաշնորհ Տ. Վազգեն եպիսկոպոս Պալճյան, որ և քարոզեց «Հայր մեր» պահում՝ վեր առնելով դերը Ս. Էջմիածնի և թվելով արժանիքները երանաշնորհ Հայրապետին։ Պատարագը երգվեցավ Նվալյան երկսեռ քառաձայն՝ դեկավատությամբ ներգաղթող Հրանտ Գեորգյանի։ 100 հոգինոց երգչախումբը կազմված էր ընդհանրապես ներգաղթողների։ Տաճարն ներս և դուրս հավատացյալներու բազմությունը կհորդեր։

Պատարագն ետք յոթնօրի կարգ երանաշնորհ Հայրապետի հողակույտին առջև, որ կիցնա հայրենասեր զուգ հայրապետներու՝ Աշտարակեցիի և Խրիմյանի գերեզմաններուն միջև։

Հավարտ կրոնական արարողություններուն, տեղի ունեցավ խորհրդակցական հավաքույթ մը Ս. Էջմիածնի Հայրապետանոցի Մաղկյա դահլիճին մեջ՝ նախագահությամբ բարձրապատիվ Տ. Վահան արքեպիսկոպոս Կոստանյանի։ Ներկա էին պատվիրակություններու կրոնական և աշխարհական անդամները՝ գրեթե բոլորը։ Հավաքույթին նպատակն էր «Էջմիածին» ամսագրին բովանդակության և ծավալումի մասին թելադրանքներ լսել արտասահմանի պատվիրակությանց կողմից։ Նղան շինիլ թելադրություններ և հանձնառություններ պատվիրակությանց կողմից։

Նույն օր, երեկոյան ժամը 8—11, պատվիրակությունը ներկա եղավ Արամ Խաչատրյանի Գայանե բայետին, Պետական օպերայի շենքին մեջ։ Հայաստանի ժողովուրդը այդ երեկո փաստեց, թե ոչ միայն առավելաբար կքաջալերե ազգային օգիտվող տղերքները և տրամադրեց, այլև հասած է արվեստի ըմբռնման բարձրագույն կետին։

(Շարունակելի)

(«ՀԱՍԿ», պաշտոնական ամսագիր Կաթողիկոսության Հայոց Կիլիկիո, Անթիլիաս, 1954 թ., մայիս—հունիս, № 5—6)